1. ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

Հարգելի ընկեր Ջոն Կիրակոսյան,[1]

1964 թվականին տպագրության համար ներկայացրի «Բանակ» աշխատությունը, նվիրված Կարսից 60-70 կմ արևմուտք ընկած զվարթնոցատիպ տաճարին:

Խմբագիրների խորհրդով աշխատության սահմաններն իմ կողմից լայնացվեց և տրվեց «Տայքի ճարտարապետական հուշարձանները» անվանումը:

Աշխատությունը կարծիքի հանձնվեց արվեստի վաստակավոր գործիչ ճարտարապետ Միքայել Մազմանյանին. որոշ նկատողություններով հանդերձ, այն ստացավ տպագրության համար միանգամայն արժանի դրական գնահատական: Նույնպիսի դրական գնահատական ստացվեց նաև ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանից:

Աշխատության նկատմամբ ակներև դրականորեն էր տրամադրված Մամուլի կոմիտեի նախկին նախագահ, հանգուցյալ Հ. Ութմազյանը: Նա այն կարևոր հա-մարելով իր ձեռքով մտցրել էր 1970 թվականի հրատարակության պլանի մեջ (աշխատությունը պլանի մեջ էր նաև նախորդ տարիներին):

1965 թվականին աշխատությունը խմբագրման հանձնվեց Ս. Տ. Երեմյանին, որը և խմբագրեց «Նախաբանը», «Իշխան», «Էգրեկ, Տայոց Քար և այլ տաճարներ» բաժինները: Հետագայում ընդհանուր խմբագրությունը հանձնվեց Մ. Դ. Մազման-յանին, որն ընդգրկեց նաև «Բանակ» բաժինը:

Այնուհետև աշխատությունը խմբագրվեց «Հայաստան» հրատարակչության խմբագիրների կողմից և իջեցվեց արտադրություն: Ստացվեց առաջին օրինակը, որը մաքրվեց, ստացվեց երկրորդ օրինակը, էլի մաքրվեց և հենց այդ ժամանակ էլ վերացավ հրատարակչության Արվեստի բաժինը և աշխատությունն անցավ Գրական բաժնի տնօրինությանը:

---

[1] Ականավոր հայ պատմաբան, դիվանագետ, պետական գործիչ: 1969-1975 թթ. եղել է ՀԿԿ կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչ (Ծ.Կ.):

Գրական բաժնի նոր վարիչ Լ. Միրիջանյանը այդ աշխատությունը համարեց «իր բաժնի համար ոչ հիմնական օբյեկտ» և հանեց 1971 թվականի հրատարակության պլանից, խոստանալով «հատուկ գրությամբ Մամուլի կոմիտեից ստանալ այն 1971 թվականին հրատարակելու թույլտվություն»:

Զանազան «հանգամանքներ» նկատի առնելով Լ. Միրիջանյանը և հրատարակչության խմբագիր Գր. Զարեյանը աշխատությունը վերանայեցին՝ կա-տարելով 6-7 էջի ծավալով կրճատումներ:

Երբ աշխատությունը պատրաստ էր տպագրության իջեցնելու համար, Մամուլի կոմիտեի պետի տեղակալ ընկ. Գ. Մկրտչյանը գալով հրատարակչություն կարգադրեց աշխատությունը հանել հրատարակությունից: Իմ ներկայությամբ հենց այսօր (29. 7. 1971 թ.), առանց աշխատությունն ընթերցելու, առանց բովանդակությանն ու էությանը ծանոթ լինելու, *հիմնվելով խմբագրման ընթացքում տեքստից արդեն հանված հատվածների վրա*, սկսեց նրան տալ քաղաքական որակումներ և չհապաղեց անմիջապես հայտնել՝

ա) Մամուլի կոմիտեից կտրվի գիրքը տպագրության չթույլատրելու որոշում քաղաքական որակումով:

բ) Խմբագիրը խստագույնս կպատժվի այս աշխատությունը արտադրություն իջեցնելու համար:

գ) Աշխատության հեղինակը այլևս հնարավորություն չի ունենա Մամուլի կոմիտեի ենթակայության որևէ օրգանում տպագրվել:

Ես իմ անսքող զարմանքն եմ հայտնում ու զայրանում, թե ինչպես այս կարևոր գործի գլուխ կանգնած անձնավորությունը, հաշվի չնստելով աշխատության արժեքի հետ, անհոգաբար մոռացության տալով մեր կուլտուրայի սրբազան շահերը, դեռ գործին հիմնավորապես չծանոթացած, ունկնդրելով աշխատության *միայն ու միայն 16 էջը կարդացած* Լ. Միրիջանյանի ցածրաձայն հաղորդմանը, անհարկի ու անխոհեմ վճիռներ է արձակում, սպառնում, ահաբեկում:

Ես խնդրում եմ հնարավոր համարեք անձամբ ծանոթանալ աշխատությանը (132 էջ) և տեր կանգնել նրան: Ըստ երևույթին *այս աշխատությունը զոհ է դառնում հրատարակչության և Մամուլի կոմիտեի աշխատակիցներից մի քանիսի հարաբերություններում առկա հակասությունների:*

Թերևս անհրաժեշտ կլինի օրինակը հրատարակչության կողմից մաքրել և մաքուր օրինակի նկատմամբ հանգել որոշման:

Խորին հարգանքով՝ Տիրան Մարության
30.7.1971
Հանրապետության վաստակավոր շինարար,
ճարտարապետության թեկնածու,
Երևան – 9, Մոսկովյան 8, բն. 33
հեռ. 56-08-33
աշխ. հեռ. 56-97-56
56-97-58